# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

««Պարտեզ» տնկարանային տնտեսություն» ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/67 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | |
|---|---|---|
| | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 2 | ««Պարտեզ» տնկարանային տնտեսություն» ՍՊԸ | Մարմնամարզական նստարան – Մարմնամարզության նստարանը հավաքովի գույք է, որը բաղկացած է նստելատեղից, տակամասի «գզրոց» մետաղական ոտքերից և հենակից: Նստելատեղը և տակամասը «գզրոց» պետք է պատրաստված լինեն հատուկ մշակում անցած սոճու կամ խեժափիճինի կամ փշատերև այլ ծառերի փայտից, պարագծի շուրջը և նստարանի անկյունները պետք է լինեն կլորացված: Մարմանամարզական նստարանի մակերեսը պետք է լինի խնամքով հղկված բարձրորակ խոնավակայուն և չսահող երկու շերտով պատված բարձրորակ երեք բաղադրիչ անգույն լաքով: Նստելատեղի չափերն են՝ 3000մմ երկարություն, 300 մմ լայնություն և 40մմ հաստություն: Տակամասի «գզրոց» չափերն են՝ 2600մմ երկարություն, 100 մմ լայնություն և 37-40 մմ հաստություն: Նստարանի մետաղական ոտքերը պետք է հնարավորություն տան ունենալ 300 մմ բարձրություն, ունենան փակ շղթայանման կառուցվածք, ոտքերի բարձրությունը մեխանիկական եղանակով կարգավորելու հնարավորությամբ: Նստարանի մետաղական ոտքերը և հենակը պետք է պատրաստված լինեն 30x30x2,0 մմ մետաղական քառակուսի խողովակից, միացումները՝ զոդման եղանակով, զոդման կարանները պետք է լինեն հղկված,փոշեներկված բարձրակարգ մուգ մոխրագույն «անտրացիտ» ներկանյութով: Մետաղական կառուցվածքը միացվում է միջանցիկ հեղյուսե |

| | | |
|---|---|---|
| | | մանեկային ամրացումով: Նստստեղի կողմից հեդյուսը պետք է լինի ողորկ, իսկ եզրերը` նստատեղի հարթության վրա: Մինչ մատակարարումը` ապրանքի նմուշը նախապես համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Նմուշը /Նկարը/ կցվում է: Նշված ապրանքի համար երաշխիքային ժամկետ սահմանել 365 օր` հաշված Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից, երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում պետք է շտկել տեղում /դետալների փոխարինում/ կամ փոխարինել նորով: Չափաբաժնում նշված ապրանքների չափսերի մեջ հնարավոր թույլատրելի շեղումը ±3%: Նշված ապրանքները պետք է լինեն նոր` չօգտագործված: Տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը և հավաքումը` ըստ հասցեների իրականացվում է Մատակարարի կողմից: Մինչև մատակարարումը ներկայացված ապրանքի նմուշները համաձայնեցնել պատվիրատուի հետ: Մատակարարման օրը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Պայմանագրի կատարման փուլում չափաբաժնով ձեռքբերվող ապրանքների պատրաստման ընթացքում օգտագործվող հիմնական նյութերի համար պարտադիր է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի առկայությունը: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Сад питомник в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/67 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | |
|---|---|---|
| | наименование производителя | технические характеристики |
| 2 | | |